

Արմաւենի Միոդլու

4. Պոլսոյ Հայերը, գիտակցելով, որ զոհողութիւնը, բարեսիրութիւնն ու նուիրումը մարդասիրական եւ քրիստոնէական առաքինութիւններ են, ինչպէս նաեւ՝ ազգապահպանման գործին համար խիստ կարեւոր, թէ՛ անհատական բարերարութեամբ եւ թէ՛ հաւաքական նուիրատուութիւններով ժԸ. դարէն սկսեալ կը բանան դպրոցներ, կը կառուցեն եկեղեցիներ, հիւանդանոցներ, որբանոցներ եւ ամէն ջանք կը գործադրեն, որպէսզի կանգուն պահեն զանոնք:

Նոյնպէս իրենց մարդասիրական ու ազգասիրական ոգին դրսեւորելով՝ ամէն ջանք կը գործադրեն ազգային մեծ աղէտի հետեւանքով տասնեակ հազարներու հասնող Հայ որբերն ու գաղթականները պահպանելու եւ սատարելու համար:

Ընդհանուր պատերազմէն վերջ, երբ ներգաղթի պատճառաւ Պոլսոյ թաղերուն մէջ կը գտնուին ազգին պաշտպանութեան եւ օժանդակութեան կարօտ հազարաւոր գաղթականներ ու որբեր, զանազան թաղերու մէջ անջատ-անջատ կը կազմուին տարագրելոց յանձնախումբեր: Այսպէս՝ 1918 նոյեմբեր 15-ին կը կազմուի Ղալաթիոյ տարագրելոց յանձնախումբը՝ 700-800 տարագրիչներու պատասպարման համար իբրեւ կայան օգտագործելով Ղալաթիոյ ռուսական վանքը: Գատըգիւղի ազգայիններու կողմէ կը կազմուի Տարագրելոց Գատըգիւղի խնամակալութիւնը, որը 1000 տարագրիչներ կը գետեղէ տեղւոյն Ազգ. Արամեան վարժարանին մէջ, իսկ 1918 նոյեմբեր 10-ին կը ստեղծուի Գում-Գալուի չորս թաղերու տարագրելոց յանձնախումբ անուան տակ կէտիկ-Փաշայի, Գում-Գաբուի, Գում-Գաբու Դրսի եւ Ենի-Գաբուի թաղեցիներէ բաղկա-

ցած մարմին մը: Գումգաբուի Մայր եկեղեցւոյ տաճարներէն մէկուն մէջ կը գետեղեն տարագրիչներ¹:

Մինչ այդ՝ 1918 նոյեմբեր 5-ին, 40-ի չափ առեւտրական Հայեր, Օսմանեան առեւտրական դրամատունը հաւաքուելով, կը կազմեն Հայ որբախնամը՝ տէր կանգնելու համար 14 տարեկանէն փոքր հազարաւոր երկսեռ Հայ տղոց, որոնք, վերջին չորս տարիներու աղէտներուն հետեւանքով որբ մնալով, Ստամպուլ կուգան: «Հայ որբախնամը» զանազան թաղերու մէջ (Առնավուտ-Գիւղ, Բերա, Կէտիկ-Փաշա, Նարլու-Գաբու, Շիշլի, Պէշիկթաշ, Պալաթ, Սկիւտար, Օրթագիւղ, Գատըգիւղ, Մաքրի-Գիւղ, Բումէլի Հիսար եւլն) կը կազմէ մասնաճիւղեր, որոնք, իրենց թաղին մէջ որբանոցներ բանալով, կը խնամեն որբերը²:

Թաղային այս կազմակերպութիւններէն վերջ Ազգային կեդրոնական վարչութեան կողմէ նշանակուած ազգայիններ Ղալաթիոյ Ազգային խորհրդարանին մէջ 1918 դեկտեմբեր 13, 16 եւ 17 նիստեր կը գումարեն եւ կը կազմեն Հայ տարագրելոց կեդրոնական յանձնաժողովը, որը կ'ունենայ չորս յանձնախումբ՝ նպաստահաւաք, ելեւմտից եւ մատակարարական, տեղաւորման եւ առաքման, առողջապահական: Հայ տարագրելոց կեդրոնական յանձնաժողովը, համարատու ըլլալով Ազգային կեդրոնական վարչութեան, կը զբաղի զանազան վայրերէ դէպի Պոլիս դիմելով իրենց

1 Ազգային խնամատարութիւնը ընդհանուր տեղեկագիր, Ա., Վեցամսեայ (1 Մայիս 1919 - 31 Հոկտեմբեր 1919), Կ. Պոլիս, 1920, էջ 10-21:
2 Նոյն տեղեւ, էջ 51-56:

ծննդավայրերը դառնալու հետամուտ տարագրեալներու, գաւառային զանազան վայրերու մէջ ժամանակաւոր հաստատուած տարագրեալներու եւ գաւառացի չքաւոր ու աշխատելու անկարող, արձակուած զինուորներու պէտքերով՝ մօտաւոր կամ հեռաւոր գաւառներու մէջ ունենալով իրեն ենթակայ մասնաճիւղեր³:

Տարագրիչներու, մանաւանդ՝ որբերու առողջապահական սպասարկութիւնն ապահովելու ձգտումով, անկախ Հայ որբախնամէն ու Տարագրելոց յանձնաժողովէն, նամէն ու Տարագրելոց յանձնաժողովէն, գոյութիւն կ'ունենայ նաեւ Հայ կարմիր խաչը, որն իր հաշւոյն կը հիմնէ դարմանատուններ՝ հասոյթի աղբիւր՝ ունենալով ժողովուրդին նուիրատուութիւնները:

Ազգային կեդրոնական վարչութիւնը, Տարագրելոց, Որբախնամի եւ Հայ կարմիր խաչի անջատ գործունէութեան վերջ միւր խաչի անջատ գործունէութեան վերջ տալու, ասոնց աշխատակցութիւնը համախմբելու, ինչպէս նաեւ հանգանակումներու գործը դիւրացնելու համար, կ'որոշէ ստեղծել համապարփակ կազմակերպութիւն մը:

Այսպէս՝ 1919 յունուար 27-ին Ազգային կեդրոնական վարչութեան Քաղաքական ժողովի որոշումով Բերայի Ազգային մատենադարանին մէջ, Քաղաքական ժողովի ատենապետին նախագահութեամբ տեղի կ'ունենայ բարեգործական հաստատութեանց ոյժերը համախմբելու եւ գաւառներէ միեւնոյն նպատակին շուրջ կեդրոնացնելու մասին խորհրդակցական ժողով մը, որուն կը մասնակցին Տարագրելոցի, Որբախնամի եւ Կարմիր խաչի վարչութիւնները: Իսկ յաջորդող օրերուն տեղի կ'ունենայ երկրորդ նիստ մը եւ քանի որ սոյն նիստին չի մասնակցիր Հայ կարմիր խաչը, կ'որոշուի միացումը կատարել միմիայն Տարագրելոց եւ Որբախնամ մարմիններու միջեւ: 1919 փետրուար 28-ին

3 Նոյն տեղեւ, էջ 25:

տեղի ունեցող երրորդ նիստին կը յայտարարուի կազմութիւնը Հայ ազգային խնամատարութեան համագործակցութեամբ հայութեան յարանուանական երեք հաստատութիւններուն: Ընդհանուր ժողովի կը հրահրուին 32 անդամներ, որոնցմէ 4 հոգին կ'ըլլան Հայ կաթողիկէ պատրիարքարանի, 4 հոգին բողոքական Հայերու ազգայնաբարանի ներկայացուցիչ, իսկ մնացեալ 24 հոգիները՝ լուսաւորչական հայերու: Ազգային խնամատարութեան կեդրոնը կը գտնուի Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ շրջափակին մէջ, ուր վարչական ժողովը կը գումարուի շաբաթը երկու անգամ՝ 12 անդամներով:

Ազգային խնամատարութեան պաշտօնատունը կ'ունենայ 8 դիւաններ (Տարագրելոց, Որբերու, Առողջապահական, Համարակալութեան, Թղթակցութեան եւ Զանգարակալութեան, Տեղեկամուտ, Վիճակագրութեան, Տեղեկատուութեան, Մթերապահութեան), որոնք տուութեան, Մթերապահութեան, որոնք գործառութեանց մէջ ուղղակի պատասխանատու կ'ըլլան Ընդհանուր տնօրէնութեան, որն կ'ընտրուի ի դիմաց վարչական ժողովոյ՝ կատարելու Ազգային խնամատարութեան գործառութիւնները⁴:

Ազգային խնամատարութիւնը, որուն ամենամեծ չափով կ'օժանդակէ Ամերիկեացի Ապաստանատոյցը (American Relief Administration), իր մէջ միացնելէ վերջ Տարագրելոց եւ Որբախնամ յանձնաժողովները, կը բանայ կայաններ Սամաթիոյ, Օրթագիւղի, Պէշիկթաշի, Խասգիւղի, Գումգաբուի, Ղալաթիոյ, Սկիւտարի եւ Գատըգիւղի մէջ: 1922 սեպտեմբերին Պոլսոյ մէջ գոյութիւն կ'ունենան ուղղակի խնամատարութեան ենթակայ 9 որբանոցներ՝ 3-ը լուսաւորչական, 6-ը մանչերու, 2500-է աւելի աղջկանց եւ 6-ը մանչերու, 2500-է աւելի որբերով: Ասոնցմէ զատ՝ գոյութիւն կ'ունենան նաեւ 11 օժանդակեալ որբանոցներ,

4 Նոյն տեղեւ, էջ 64-66:
5 Նոյն տեղեւ, էջ 79-80

6-ը աղջկանց եւ 5-ը մանչերու, մօտ 1100 որբերով: Այս որբանոցներէն 4-ը կ'ունենան նաեւ արհեստանոցներ՝ աղջիկներու համար կարուձեւ, ձեռագործ, գուլպայի շինութիւն, իսկ մանչերու համար կօշկակարանոց, ատաղձագործարան, դերձակատուն, ուր որբերը, հետզհետէ կատարելագործելով իրենց արուեստը, ինքնապահ կը դառնան⁶:

15 սեպտեմբեր 1922 թուականին Գուլիսի կեդրոնական որբանոցը ուղղակի Ամերիկեան նպաստամատոյցի մատակարարութեան տակ կը դրուի՝ ամէն որբի համար վճարելով ամսական 5 ոսկի: Ապա Պոլսոյ կեանքին սղելուն եւ պարագաներու բերմամբ ինամատարութեան հասոյթներու նուազման պատճառաւ որբերու մատակարարական գործը ամբողջովին կը յանձնուի Ամերիկեան նպաստամատոյցին՝ վճարելով անոնց համար ծախսուած գումարին կէսը՝ շուրջ 10.000 տուրք: Ամերիկեան նպաստամատոյցը 1922 նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներու ընթացքին որբերը ամբողջութեամբ կը փոխադրէ Յունաստան՝ իր խնամքին տակ պահելով նոյնպէս զանոնք: Այսպէս կը դադրի ինամատարութեան որբախնամ գործը: 1923-1924 թթ. տիրող տնտեսական սուր տագնապի պատճառաւ գաղթականական շարժումը՝ գաւառներէն Պոլիս եւ Պոլսէն արտասահման, կը պահէ իր կարեւորութիւնը: Ազգային խնամատարութիւնը աշխատանք կը տանի Պոլիս ժամանող գաղթականներուն ցամաքահանման եւ տեղաւորման գործին, ինչպէս նաեւ արտասահման մեկնող գաղթականներուն անցագրի պատրաստութեան եւ ճամբորդութեանց առթիւ անհրաժեշտ դիւրութիւններ ընծայելու գծով՝ պարագաներուն եւ նիւթական միջոցներուն ներած չափով: Ասոնցմէ գատն Պոլսոյ գաղթականաց կայաններուն մէջ

պատասպարուող գաղթականներուն ապաստանարան, ուտելիք, հիւանդներուն դեղու դարման կը հայթայթէ: Երբ գաւառներէն Պոլիս կը հասնին նոր որբեր, հակառակ իր նիւթական անձուկ վիճակին, Ազգային խնամատարութիւնը կը հարկադրուի բանալ որբանոց մը Սկիւտարի մէջ, ուր կը պատասպարուին շուրջ 250 որբեր, որոնցմէ 200-ը 1923 ապրիլին կը փոխադրուին Ռումանիա եւ կը յանձնուին տեղւոյն հայերուն խնամքին⁷:

1923 օգոստոս 31-ին Պոլսոյ 13 կայաններուն մէջ կը պատասպարուին 6385 գաղթականներ, որոնց համար կը ծախսուի 93.678.08 ոսկի⁸: Խնամատարութիւնը, հակառակ Պոլսոյ մէջ տիրող տնտեսական սուր տագնապին, կը յաջողի ընդառաջել գաղթականաց առօրեայ պէտքերուն, նոյնիսկ՝ աշխատութիւն ճարել անոնցմէ ոմանց, ղեկավարել գաղթականներուն հոսանքը գաւառներէն դէպի Պոլիս եւ Պոլսէն դէպի արտասահման (մեծ մասամբ՝ Տրանսա): Կայաններու մէջ պատասպարուող գաղթականներու առօրեայ զանազան պահանջներուն կարեւորագոյններէն կ'ըլլայ կայանի երկսեռ փոքրիկները գերծ պահել զանազան վտանգներէ ու կրթել զանոնք: Խնամատարութիւնը կը ձեռնարկէ կայաններու մէջ մասնաւոր դասընթացներ կազմակերպել, իսկ այն կայաններուն մէջ, ուր կարելի չ'ըլլար նման դասընթացներ կազմակերպել, կայանի փոքրիկները կը շրջէ վճարովի թաղային վարժարաններ⁹:

Երբ կրթական եւ առողջապահական գործավարութեանց հրահանգներուն համաձայն կը փակուին գաղթականաց կայաններու մէջ խնամատարութեան կողմէ որբ տղոց համար բացուած դպրոցները,

7 Նոյն տեղէն, էջ 140-141
8 Նոյն տեղէն, էջ 142
9 Նոյն տեղէն, էջ 144:

6 Ընդարձակ տարեցոյց Ազգային հիւանդանոցի, Կ. Պոլիս, 1924, էջ 139:

խնամատարութիւնը, չ'թողելով, որ որբերը փողոցները թափառին, կը խնդրէ մօտակայ թաղերու թաղային խորհուրդներու ու համեստ վճարումներու փոխարէն 1924 վերամուտին կը տեղաւորէ զանոնք թաղային վարժարաններուն մէջ¹⁰:

1924 թուականին Պոլիս կ'ունենայ 11 կայաններ, ուր կ'ապրին 1200 կին, 2016 այր, 1456 մանչ եւ 1364 աղջիկ, ընդամէնը՝ 7036 պատասպարեալներ¹¹: Այս գաղթականաց համար կը ծախսուի 102.990 ոսկի գումար մը: Խնամատարութիւնը կը հոգայ նաեւ 1000-է աւելի գաղթական դպրոցական տղոց դաստիարակութեան եւ ուսման պէտքը: Խնամատարութեան միջոցաւ անպէտք ստանալով արտասահման մեկնող գաղթականներուն թիւը կը հասնի 7057-ի: Նոյն տարին Ամերիկեան նպաստամատոյցը կ'որոշէ միայն որբերու շուրջ սահմանափակել իր գործունէութիւնը եւ կը դադարեցնէ գաղթականներուն տուած իր նպաստը: Պատրիարքական տեղապահ Գէորգ Ասլանեան սրբազանը գաղթականներու փոխադրութեան գործին մէջ Ազգային խնամատարութեան օգնութիւն ապահովելու համար, շրջաբերականներով օրինակաւ նացնելու կը ձեռնարկէ հասարակութեան եւ պաշտօնական մարմիններու նպաստի վճարումը՝ ուշադրութեան հրաւիրելով թաղային խորհուրդները¹²: Սանասարեան կտակի խնամակալութիւնը եւս իր նիւթական աջակցութիւնը չ'խնայել կայաններու տղոց կրթութեան գործին:

1925 օգոստոս 31-ին Պոլսոյ 8 կայաններու մէջ բնակող գաղթականներուն թիւը կ'ըլլայ 4016¹³: Իւրաքանչիւր կայանի համար ընտրովի կը կազմուի 5-7 հոգանոց

կարգապահական մարմին մը, որուն պարտականութիւնը կ'ըլլայ օգնել կայանի հակիչներուն՝ կարգապահական, մաքրութեան եւ մատակարարական գործերու մէջ¹⁴:

Կայանաբնակ գաղթականներու համար կը տարուի նաեւ առողջապահական աշխատանք: Բազմամարդ կայանները կ'ունենան մէկ-մէկ մնայուն հիւանդանոց, որոնք կ'օգնեն այցելու բժիշկներուն: Առողջապահական հարցերու մէջ իր նպաստը կը բերէ նաեւ Ս. Փրկիչ ազգային հիւանդանոցը, դարմանման գործին մէջ չ'հիւանդներուն¹⁵, որոնք կարելի չ'ըլլար դարմանել կայաններու մէջ:

1926 յուլիսին կայաններու մատակարարութիւնը կը յանձնուի նոր խնամատար մարմնի մը, որ առաջին գործը կը վերակազմէ կարեւոր թաղերու մէջ 10-ի չափ թաղային մասնաճիւղեր:

Գաղթականաց գործին իրենց օժանդակութիւնը կը բերեն աղքատախնամ մարմինները՝ հոգածութիւնը ստանձնելով նպաստի եւ բժշկական խնամքի ենթակայ բազմաթիւ կարօտեալներուն:

1927 թուականին թէեւ կը նուազի կայաններու թիւը, բայց կարելի չ'ըլլար բոլորովին փակել զանոնք. 3 կայաններու (Սամաթիա, Օրթագիւղ եւ Գուրուէշմէ) մէջ գոյութիւն կ'ունենան 700 գաղթականներ¹⁶: Ազգային խնամատարութեան 1927 տարուան պիւտճէն կը կազմէ 1500 ոսկի, որուն 500 ոսկին սնունդի, 600-ը գաղթական տղոց ուսման, 200 ոսկին 25 որբերու յատկացուած եւ մնացեալն ալ պաշտօնէութեան ծախքը կ'ըլլայ¹⁷: Բացի

10 Առաւօտ, 1.XI.1924:
11 Յուսարեք, 10.V.1924:
12 Արեւ, 26.XI.1924:
13 Ընդարձակ տարեցոյց Ա. Փ. Ազգային հիւանդանոցի, Կ. Պոլիս, 1926, էջ 81:

14 Նոյն տեղէն, էջ 71:
15 Նոյն տեղէն, էջ 73:
16 Ընդարձակ տարեցոյց Ա. Փ. Ազգային հիւանդանոցի, Կ. Պոլիս, 1928, էջ 400:
17 Ընդարձակ տարեցոյց Ա. Փ. Ազգային հիւանդանոցի, Կ. Պոլիս 1927, էջ 419:

